III № 715

# ՆԿԱՐԱԳԻՐ

## ՀԱՆԴԻՍԻ ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

ԵՒ

## ՀԱՆԴԻՍԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԱ-
ՌՈՅՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ
ՋՈՒՂԱՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ
ՍՐԲՈՑ ՎԱՆԱՑ
Ի ՆՈՐ ՋՈՒՂԱ
1880

9401

# ՆԿԱՐԱԳԻՐ

## ՀԱՆԴԻՍԻ ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Որ յօրինեցաւ ՚ի կարգէ Առաջնորդարանի Ամենափրկչեան Ս. վանաց
Նորոյս Ջուղայու ։

---

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ

ՀԱՅՈՑ

---

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ԳՐԻԳՈՐԻՍ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

ՍՐԲՈՅ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆԱՑ

---

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ

ՍՐԲՈՅ ՎԱՆԱՑ

Ի ՆՈՐ ՋՈՒՂԱ

1880

5641

9401

# ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՆԴԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Յաւուր Տօնախմբութեան Սրբոց Վարդանանց, քաջամարտիկ Զօրավարաց Քրիստոսի և պանծալի նահատակաց մերոց Հայաստանի. որ յԱմենափրկչեան սուրբ Վանս Նոր Ջուղայու 'ի 28 — 11 Մարտ 1880, ամի Տեառն։

---

Ըստ հրամանի Նորին Ամենապատիւ Բարձր Սրբազնութեան Տեառն Գրիգորիսի Արքեպիսկոպոսի և Առաքելաշաւիղ Առաջնորդի Ամենափրկչեան Սրբոյ Վանաց՝ Պարոն Աւետիք Կ. Մ. Զօհրապեանց Ատենադպիր յիշեալ Վանաց տպագիր հրաւիրանագրաւ իւրով ազդ արար Պատուելի Հասարակութեան Ջուղայուս՝ օրինակ զայս

## Ա.Զ.Դ

“Ըստ հրամանի Նորին Բարձր Սրբազնութեան
“Ամենապատիւ Տեառն Գրիգորիս Արքեպիսկոպոս Առաքե-
“լաշաւիղ Առաջնորդի Ամենափրկչեան Սրբոյ Վանացս՝ պա-
“տիւ ունիմ ծանուցանել Պատուելի Հասարակութեան Հայոց
“Ջուղայու, զի 'ի վաղիւն Տօն լինելով սրբոց Վարդանանց՝
“քաջ նահատակաց սուրբ հաւատոյս մերոյ՝ է միանգամայն
“և Տօն Ազգային։ Աստի ըստ տնօրէնութեան Նորին բար-
“ձր Սրբազնութեան սուրբ Պատարագ մատուցանելոց է
“Բարձր Արժանապատիւ Խաչատուր Հայր սուրբն 'ի Ս.
“Վանս, և զկնի արձակման Եկեղեցւոյն՝ հրաւիրեն համա-
“գիք մեր 'ի սրահ Առաջնորդարանի, ուր լինելոց է ճառ-

« խօսութիւնք և երգեցողութիւնք մանկանց Դպրոցաց 'ի-
« պատիւ և 'ի յիշատակ տարեդարձի Ազգային անմահ բա-
« րերարացն մերոց »:

'ի 27 – 10 Մարտ 1880 ». « Խոնարհ Ծառայ Ազգիս
'ի Ս. Վանս Ամենափրկչեան Աւետիք Կ. Մ. Օհրապեանց
'ի Ջուղա. Ատենադպիր Ս. Վանաց »:

---

Արդ՝ համաձայն հրաւիրանագրոյս այսօրիկ բարեպաշտ ժողովրդականք իւրաքանչիւր Թաղից 'ի հետեւեալ առաւօտուն սիրայօժար կամօք և ջերմեռանդ սրտիւ ժողովեցան 'ի Ս. Եկեղեցի Վանացն. Յորանոր 'ի ժամ սուրբ պատարագին զոր մատուցանէր Բարձր Արժանապատիւ Խաչակիր Խաչատուր Վարդապետն, Նոյն Բարձր Սրբազան Հոգևոր հովիւ մեր ելեալ 'ի բեմ սուրբ սեղանոյն՝ ընաբան եդ իմաստալից քարոզի իւրում զբան իմաստնոյն Սողոմոնի Թէ « Ոչ Թէպէտ և յաչս մարդկան տանջեցան, այլ յոյս նոցա լի է անմահութեամբ » ( Իմաստ. Գ. 4 ): Եւ այնու յայտնեալ զանմահութիւն և զմեծ բարերարութիւն քաջանահատակ զօրավարացն Քրիստոսի և մեծ ախոյենից հաւատոյս սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ հաւաստի առնէր ունկնդրաց ասելով. « Ոչ եթէ 'ի պաշտպանութիւն սուրբ Եկեղեցւոյ և Հայրենեաց մերոց ոչ էին լեալ յայնմ դարու այնպիսի առաջինի և անձնազոհ նահատակք ընդդէմ չարաչար մեքենայութեան մոխրապաշտին Յազկերտի. և չէր նոցա ազատ կացուցեալ զԱզգութիւն և զսուրբ կրօն մեր 'ի մոլար և պիղծ կրօնէն մոգական՝ ապա և մեք ոչ էաք բարոյապէս կենդանի. և յայնչափ երկար դարուց հետէ ոչ 'ի Հայաստան՝ և ոչ յայլ հայաբնակ աշխարհի յարատեւեալ գոյին 'ի մեզ այսպիսի հոյակապ և հրաշակերտ սուրբ Եկեղեցիք. յաւել և զայս, Թէ Արդ՝ եթէ 'ի կռապաշտական խաւար դարուն ամենայն ճիգն և ջանք մոլեռանդից անօրինաց էր 'ի բաց բառնալ 'ի բաց Հայրենեաց մերոց 'ի Հայաստանէ զսուրբ կրօն և



զՔրիստոնէական Եկեղեցի մեր, և ընդ այնր մուծանել անդր զօրէնս մոլար դենից իւրեանց, ապա և մեզ երջանիկ դար՝ ապա գոհասցուք զՏեառնէ և փառս վերառաքեսցուք անճառելի սուրբ կամաց Մարդասիրին, զի յայսմ դարու ոչ 'ի Հայաստան և եթ՝ այլ և 'ի սիրտ Պարսկական աշխարհիս յ 'ի քաղաքիս յայսմիկ յորում բնակեալս եմք՝ Թէ բարեպաշտիկ բերմամբ ժամանակիս, Թէ շնորհիւ բարեխնամ Արքայի երկրիս, և Թէ առաւելապէս անհուն ողորմութեամբ և ամենօրհնեալ սուրբ կամօք Արարչին՝ գտանին հրաշակերտ սուրբ Վանքս Ամենափրկչեան, և այլ փառաւոր Եկեղեցիք, յորս ազատ պաշտեմք զհաւատս մեր սուրբ: Յաւել 'ի վերջաբանութեան մեծաւ դրուատանօք յերևան ածեալ զերախտաշատ բարերարութիւնս այնոցիկ յօգուտ Հայ ազգիս և 'ի փառս Աստուծոյ՝ սրտառուչ իմն եղանակաւ յորդոր կարդայր մանկանց սուրբ Եկեղեցւոյս, այն է ջերմեռանդ ժողովրդականաց իւրոց Թէ « Եթէ հարազատ որդիք եմք Սրբոց Վարդանանց և Ղեւոնդեանց՝ ապա և պարտիմք հաւատարիմ հպատակք գոլ սուրբ Եկեղեցւոյս մերում, զի եթէ ոչ հանդոյն նոցին մարտ լիցէ մեզ արեամբ չափ նահատակել (վասն 'ի նմանատիպ հարկի չգոլոյ) գէթ ջանասցուք հայրենասէր հոգւով և բարենախանձ քրտամբք հետեւող գոլ սխրաքանչ գործոց նոցին, և երախտագէտ սրտիւ ճանաչելով զարժանագոյն բարիս այնոցիկ որոց 'ի սէր ցանկալւոյն իւրեանց փրկչին Յիսուսի Քրիստոսի հեղեալ զարիւն փրկեցին և ինքեանք զՀայրենիս մեր և դարուց 'ի դարս հասուցին 'ի մեզ զհայրենի աւանդն Տիրական. ուստի ըստ նոցին օրինակի ջատագով և պաշտպան պարտիմք հանդիսանալ ասէր սուրբ հաւատոյս և ուղղափառ Եկեղեցւոյ մերում »:

Զկնի աւարտման հոգեշահ քարոզիս և արձակութեան Եկեղեցւոյն՝ Պատուարժան դասք Սրբակրօն Քահանայից, Սրբասուն Կուսանաց, և համայն ժողովրդականաց ծերոց և տղայոց ելեալ խմբովին 'ի վերնայարկ ընդարձակ դահլիճ Առաջնորդարանին. ուր գահագլուխ բազմեալ էր Նորին Բարձր Սրբազնութիւն Տեառն Գրիգորիսի բարե-

խնամ Առաջնորդին մերոյ՝ և զկնի մեծարելոյ ամենեցուն ըզպատկառելի ներկայութիւն Հոգևոր Հօրն իւրեանց, համբոյր խոնարհ մատուցանելով օծեալ սուրբ Աջոյն՝ և 'ի փոխարէնն ընկալնելով զօրհնութիւնս՝ իւրաքանչիւր ոք կալաւ զիւր տեղի : Յայնժամ նուագի Սրբակրօն Տէր Մեսրովբ Կ. Գալթեան, և Պարոն Մկրտիչ Կ. Մ. Զօհրապեանց վարժապետք Մ. և Յ. Ամենափրկչեան, և Հայկեան Հայրենասիրական երկուց Ազգային Ուսումնարանաց Զուղայու հանդերձ մեծ Պատուելի Դասատուօք այն դպրոցաց և կարգաւորեալ աշակերտօք իւրեանց ներկայ գոլով անդանօր՝ յառաջ մատեան վեցեքին յԱշակերտաց Հ. Հ. ուսումնարանին, և քաղցր ներդաշնակութեամբ երգեցին երգ մի վասն հանդիսի Տօնին Վարդանանց՝ որոյ սկիզբն էր "Եկաց պարծանաց,, : Յետ այնորիկ Պարոն Մկրտիչ Կ. Մ. Զօհրապեանց, Վարժապետ Հ. Հ. ուսումնարանին յառաջ մատուցեալ ընթերցաւ զճառ մի ներբողեան 'ի վերայ նոյն պանծալի նահատակաց սրբոց, որոյ սկիզբն էր "Բարէ գերազանցութեան,,. և հաճելի գտաւ 'ի լսելիս բոլորեցունց : Զկնի այսր քանիք յԱշակերտաց Ամենափրկչեան Դպրոցին երգեցին երգ մի ազնուական ոյր սկիզբն էր "Ո՛ նահատակն,, եւն : Զկնի այսորիկ ամենայնի ընթերցայ և ես չափաբանական նուագ մի աշխատասիրեալ 'ի նուաստութենէ իմմէ, յորում նկարագրեալ էին Արկածք Հայաստանի 'ի հինգերորդ դարու, և դառնաղէտ նկարագիր նահատակութեան սրբոց Վարդանանց, և սկիզբն էր "Տխուր քնար,, եւն. որ հաճելի գոլով յաչս Նորին Բարձր Սրբազնութեան և հանդիսականաց՝ և ուրախացեալ 'ի վերայ երախայրեաց խոնարհ աշխատութեան իմոյ՝ ծափահարութեամբք և հայրական քաղցր օրհնութեամբ իւրով խրախուսեաց զիս Նորին Բարձր Սրբազնութիւնն : Յետ այնր քաղցրանուագ երգ մի ևս երգեցաւ յաշակերտաց Ամենափրկչեան Դպրոցին ոյր սկիզբն էր "Ո՛վ դու Վարդան,, :

Ապա նոյն հոգևոր Հայր և Տէր ամենեցունց զգածեալ բնաւին յիշատակօք անմահ բարերարաց Ազգիս,



զուարթ դիմօք սկիզբն կալաւ պերճախօս ատենաբանութեան իւրոյ, և հանճարեղ բանիւք բացատրելով զանցեալ տառապանս խղճալի մօրն մերոյ Հայաստանի, և զԱստուածահաճոյ գործս առաքինիս հարազատ որդւոց նորին Սրբոյն Վարդանայ, և նահատակակցաց իւրոց, որ և ստուգաբանութեամբ չքնաղ անուանն իբր "վարդ է այն,,, բացայայտեաց թէ զարժանավայել առաքինական յատկութիւնս նոցին՝ և թէ զտօնելի յիշատակ անմահ բարերարացն Հայաստանեայց : Ուստի վսեմ և քաղցրամօք բանիւք յորդորեաց զամենեսին գուն գործել արժանաւոր գտանելոյ հայրենասիրական ունակութեանց հանգոյն սրբոց Վարդանանց և Ղևոնդեանց, և իբրև հարազատ որդիք հոգևոր մօրն մերոյ սուրբ Աթոռոյն Էջմիածնի Աստուածպաշտութեամբ և ընկերսիրութեամբ հանդերձ յանձին բերելով զառաքինի բարս՝ սիրել զսուրբ կրօն, զԱզգութիւն և զուղղափառ Եկեղեցի մեր. և խոնարհ դիմօք յարգել զԱռաքելաժառանգ Հովուապետութիւն Հօր բոլորեցունցս Եռիցս երանեալ Տեառն Տեառն Գէորգայ Դ. Սրբազնասուրբ Կաթուղիկոսի և Աստուածընտիր Ազգասէր Հայրապետի համօրէն Հայաստանեայց : Ուստի վերջաւորելով զբանս իւր բարեմաղթութիւնս ուղղեաց առ Աստուածատուր հոգեկան և կենցաղական բարօրութեան համօրէն մերազնեայց : Ի վերջ ամենայնի՝ թէ՝ սրտաշարժ ատենախօսութեամբ Սրբազան Հօր՝ և թէ՝ տխրազգած յիշատակօք տօնելի հանդիսի քաջ նահատակացն գրեթէ զգածեալ բնաւին և ոգևորեալ գոլով համայն հանդիսականաց՝ ընկալան զհայրական լիազեղուն օրհնութիւնս 'ի հոգևոր հօրէն իւրեանց, և վայելելով զթէյս և զքաղցրաւենիս՝ արձակեցան 'ի բաց :

'ի Նոր Զուղա 1880.
'ի 22 – 3 Ապրիլի
ամի Տեառն :

Գէորգ Կ. Մ. Զօհրապեանց :

## Երգ վասն Վարդանայ քաջ Սպարապետին Հայոց .

Թո՛ղ պարծանաց Տանս Հայկազեան
փառք Ազգութեան քաջն վարդան ,
Ում ժիրաժիր արիութեամբ
Հանդիսացար վէհ ախոյեան ։
Ո՛վ Վարդան արի՛դ Վարդան
պարծանք ազգիս և Հայութեան ։

Որ 'ի նախանձ Սուրբ Օրինաց
Նահատակեալ արիաբար ,
Ջերծ կացուցեր զեկեղեցին
Ի ճիրանաց խորոխտ գազանին ։
Ո՛վ Վարդան արի՛դ Վարդան և այլն .

Դու մեզ երկրորդ Դիւցազն Հայկ
Յորմէ սերեալք ազգըս մեր Հայք ,
Որ զՆեբրովթըն սատակեալ
Թող Սուրբ զՕրէնս 'ի Հայաստան ։
Ո՛վ Վարդան արի՛դ Վարդան և այլն .

Ահա՛ և դաշտն Աւարայրի
Ուր մրցմանցդ է սուրբ տեղի ,
Եւ հովանիքն շաւարշական
Քոյդ պսակեն զքաջութիւն ։
Ո՛վ Վարդան արի՛դ Վարդան և այլն ։

Ընդ որս և մեք վեհիդ գործոց
Համբաւատենչ զյիշատակ ,
Արդ հռչակեմք 'ի հանդիսիս
Ի սէր վառեալ սրբոյ Կրօնիս ։
Ո՛վ Վարդան արի՛դ Վարդան և այլն ։



## Ճառ կարգական Հանդիսի

Հրապարակախօսեալ յաւուր Հանդիսակատարութեան Տօնի քաջ Նահատակացն Քրիստոսի սրբոց Վարդանեանց , յատենի Նորին Բարձր Սրբազնութեան Տեառն Գրիգորիսի Արքեպիսկոպոսի Բարեխնամ Առաջնորդին սրբոյ Ամենափրկչեան Վանաց 'ի Նոր Ջուղա 28 . փետրուարի 1880 ։

---

Բարէ՛ գերազանցութեան շքեղափայլ և գերաշուք աւուրս այսորիկ մեծի , ո՜վ փառաւոր հանդիսակատարութեան Տօնիս յորում նոր տեսարան՝ նոր զգացմունք սրտի՝ և քաղցր ժպիտ յերևան գան մեզ , ոչ որպէս զօր յերէկն և յեռանդն՝ այլ տարօրինակ իմն յեղափոխութեամբ յուրաքանչիւրոց 'ի դէմս զծայրացեալ ցնծութիւնս բացերև նշմարեմ ։ Այլ տեսցուք թէ զո՞յ արդեօք առարկայ ինչ առթող այսքանեաց ցնծութեան , զոյ՝ և կարի քաջ յիրաւի , զի չէ ինչ տարազէպ վարկանելի երևոյթ տեսարանիս . Ուրեմն միթէ ընդ անգիտութեանն օքօղեալ պատրուակաւ յտնեսցի 'ի մեծէ ուրախութենէս ։ Ո՛չ , ահա օր է մեզ օր բարեբաստիկ և յիշատակ ազատութեան , յորում ստիպիմք իրաւամբ կազմել հանդէս ուրախութեան , և հրճուիլ ընդ այն զի ազգային է Տօնս և գովութեան արժանի յիշատակ սորուն , որ 'ի բազական դարուց հետէ բարձր 'ի գլուխ պանծայ և փառաւորի ընդ ամենայն Եկեղեցիս Հայաստանեայց . և ամենեցուն մեզ պարտ պարտուպատշաճ 'ի վերայ կայ ըղձատենչ փափագանօք կատարել զյիշատակ և հանդէս ուրախութեան . մինչ զմտաւ ածեմք զազատութիւն Եկեղեցւոյ և Ազգիս՝ 'ի խորոխտ բռնակալութէ զոռոզացեալ Թշնամւոյն հաւատոյ և զանքոյթ պահպանութիւն կրօնի որ 'ի խաւարեալ դարու անդր կռապաշտութեան ։

Այլ թէ 'ի պատճառ որոյ է հանդիսակատարութեանս մեր այս նպատակ , և կամ ո՞ր այն ազատարարք եկե-

ղեցւոյ, և անքոյթ պատսպարան պաշտպանութեան կրօնից ընծայ եղեն, զոր 'ի յառաջաբանի անդ յիշեցի, զՍուրբն Վարդան ասեմ և զվարդանեանս, զՎարդան Պսակն եկեղեցւոյ Հայաստանեայց, յաղթող Նահատակն Քրիստոսի, և քաջ ախոյեանն Եղիշէ սերեալն 'ի շառաւիղէ սրբոյ Հայրապետին մերոյ Սահակայ Պարթևի. որ յիրաւի՝ ըստ յիշատակաց արժանւոյ գործոյն ընկալեալ է զարժանաւոր անուն "Վարդան," որ ըստ ստուգաբանութեանն իմանի վարդ է այն, այն է հիւսեալ 'ի կարմրափայլ վարդից սուրբ արեան նահատակութեան իւրոյ:

Եւ թէ ո՞ր իցէ արդեօք սորա առաւել գովութեանց և յիշատակաց արժանի գործ գերազանցեալ քան զայլ արժանայիշատակ Համազնեայս մեր, որք թէ առ անցեալ դարս և թէ առ ներկայս, առ որ և անգամ հարկադրի եկեղեցին Հայաստանեայց յատկացեալ Ազգային Տօնս կարգել 'ի պատիւ սորա. Յիրաւի՝ առաւել գովութեանց և յիշատակաց արժանի են գործ մեծագործութեանց սորուն, քանզի մինչ ողջամիտ և նուրբ դիտողութեամբ ակն մտաց յառեալ ընդ դարս դարս առ մեծանուն և գերահամբաւ դիւցազունս, որք յաջորդաբար մի զկնի միոյ յերևան եկեալ են յաշխարհի. արդ ուրեմն նշմարեմք 'ի նոսա զբազում արժանի դրւատանաց գործս մեծագործութեանց, որոց և յիշատակաց արժանաւոր անուանքն զհամբաւի հարեալ են ընդ ոլորտս աշխարհի, բայց որք առաւել գովութեանց տարեալ են զյաղթանակն՝ այնոքիկ են յիրաւի որք անյողդողդ արիութեամբ դիմադրեալ են մահու վասն Ազգի և Հայրենեաց. որպէս ունիմք յօրացոյց զԼեւոնդէս արքայն Աթենացւոց. որ ըստ պատմելոյ Սկլատեսի ոչինչ՝ զանգիտեաց մեռանել վասն Հայրենեաց, որպէս և այլք բազումք, բայց առաւել գովութեանց թագ կապեալ գերազանցի քան զամենայն քաջ սպարապետն մեր և նահատակն Քրիստոսի մեծն Վարդան որ ոչ միայն վասն ազատութեան Հայրենի աշխարհին՝ այլ և առ Քրիստոսաւանդ կրօնիցն սրբութեան աներկեւղ արիութեամբ զանձն 'ի կշիռ եդ. դիմադրաւ լեալ յո-



խորտ արհամարհանաց թշնամւոյն որով և Հայաստան ազատութիւն զգեցաւ, և Քրիստոսական կրօնն 'ի կայի հաստատութեան անշփոթ կայ մինչև ցայսօր:

Ահա սոյն այս նպատակ սերկեանս փառաւոր հանդիսակատարութեան Տօնիս, և այս արդարև պատճառ այսքանեաց բերկրապատար ցնծութեանս ո՛ մեծարու Հանդիսականք: Վասն որոյ փութասցուք ամենեքեան նախանձաւոր լինել սրբոյ Վկայիս, վառել նովին կրօնասիրական և ազգասիրական հոգւով և հանդոյն նմին, փութաջան եռանդեամբ սիրել զԱզգս և զՀայրենիս, և քաջ ախոյեան հանդիսանալ պաշտպանութեան սրբոյ կրօնիս, որով զի արժանասցուք ընդունել 'ի Քրիստոսէ փրկչէն մերմէ զյաղթանակն փառաց:

Մ. Կ. Մ. Զօրաբեանց
Ա. վարժապետ Հ. Հ. Ուսումնարանին:

---

Ո՛վ Նահատակըդ՝ մեծ Վարդան՝ Հայոց շուք.
Երախտազգացս՝ ձօնեն աչք մեր՝ զարտասուք,
Սահակ, Սուրմա՝ զՂևոնդ երէց՝ ուր և դուք,
Ո՛հ երբ զվարդ անկան թառամ 'ի մեր շուք:
Քո սուրբ արեամբ՝ ներկեցան դաշտք՝ մեր Վարդան,
Յաշխարհ 'ի տես՝ ողբք ելանեն՝ գետք գնան.
Ընդ այս քոյ գործ՝ քարոզք անմահ՝ վկայեն,
Սոսկ յիշատակ՝ ճառք մեր համայն՝ անզօրեն:
Քո երախտեաց՝ չունիմք արժան փոխադարձ,
Քան նուիրել՝ վառունս զսիրտ մեր ցաւած,
Կոչեմցն զքեզ՝ յոյս քո գթած՝ Տէր Յիսուս,
Փութա՛ հանգչել՝ 'ի վարձ բարեացդ յերկին լոյս:
Ո՛վ ազգ Հայոց՝ անկաւ վարդն՝ առէք ծոց,
Բազմաբուրեան՝ յարդարել յար զծաղկոց,
Երախտապարտ՝ ոգւով փութալ կապել զ՞փունջ.
Ընծել անոյշ՝ զհոտ ջերմին՝ հաւատոյ:

# ԵՐԿԱԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ի Հինգերորդ դարու, և Նկարագիր Նահատակութեան սրբոց Վարդանանց, քաջամարտիկ Զօրավարաց և Ախոյենից սուրբ հաւատոյ ։

« Հայր մեր զՍուրբ Աւետարանն գիտեմք՝ և Մայր զԱռաքելական Եկեղեցի կաթուղիկէ »։ « Քանզի մի է մայր մեր Եկեղեցի որ երկնաւորն զմեզ՝ և մի է հայր մեր Սուրբ Հոգին, որ ծնաւ զմեզ. զիարդ համահարք և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին և ոչ միաբանք »։ ( Եղիշէ. Դ. և Է. Յեղանակք )։

1

Տխուր քնար Այրարատեան աշխարհին՝
Հնչէր լռիկ, տայր արձագանքս ցաւագին.
Հայաստանի ծագէր սև՝ օր սև արև,
Դժբախտութեան գուժել աղէտս ակներև ։

2

Մ՛ինչ նենգամիտ և դիւաշունչն այն Յազկերտ
Մեր հայրենեաց դիւթէր հնարս չարարուեստ՝
Պարք Դիւցազանց Նախարարաց Մամիկեան,
Խըմբին 'ի սէր, 'ի միութիւն ազգային ։

3

Մ՛ինչ զալարեալ շանթէր այն օձ Թունալից՝
Թունաւորել զսուրբ կրօն մեր ամբիծ՝
Սրբոյ ուխտին որբագումար Երիցունք՝
Հայցեն ողորմ բազկատարած աղօթիւք ։



4

Մինչդեռ Չոլերք մոգաց Արեաց գիցամոլ,
Եկեղեցեաց սպառնան աւեր ահաւոր,
Խարդաւանօք Սադայելեան իշխանին՝
Ջանան՝ յատրուշան փոխել իւրեանց պիղծ դենին ։

5

Վշտակոծեալ գերոյն աղիք քաջարեաց,
Սիրտք բաբախին, հոգիք վառին 'ի նախանձ.
Խիստ գոլով դո՛ռ դիմադարձ հրամանին՝
Կէսք աղօթեն Աւետարան 'ի ձեռին ։

6

Փղձկին 'ի լաց անդ համօրէն Հայկազունք,
Կանայք համեստք, և Օրիորդք փափկասունք.
Ի քնքուշ սիրտս յուզին անդրէն զգացմունք՝
Յանմեղ աչաց Թափին վէտ վէտ արտասուք ։

7

Ո՜նչ այն բարբառ եղերական աշխարհաց,
Հնչէր անդուստ յԱյրարատեան գաւառաց,
Տխուր Ոգին էր Հայաստան աշխարհի՝
Զհանդուրժեալ դառն աղետից Հայ ազգի ։

8

Ա՜նդ տագնապէր մեր սիրական Հայրենիք.
Մղձկեալ գոչէր՝ « Արիասիրտ իմ որդիք,
Մի՛ յապաղիք ձեր կուռ բազկօք անվթար՝
Գոլ մայրենի արդեան վշտացս Մխիթար ։

9

Հայաստանեայց քաջահամբաւ դիւցազունք,
Հայկազեանց առիւծասիրտ գոռ սերունդք,
Մինչ բորբոքեալ վառ նախանձու սիրաթունդ՝
Գան ծաղկին անդր յԱրտաշատ գունդագունդ։

10

Ահա քաջազուն Սպարապետին Վարդանայ՝
Մարտին խրախոյս՝ զօրացն 'ի սիրտ քաղցրանայ.
Սակս հայրենեաց և լուսափայլ սուրբ կրօնից՝
Գո՛չ շահատակ և ախոյեան կամակից։

11

Փոխան փառաց սոյն կենցաղոյս դիւրահեշտ՝
Անմահական պճնին զարդուք լուսազգեստ.
Եւ հաղորդեալ Ամենասուրբ խորհրդեան՝
Վառին 'ի սէր. 'ի լոյս հաւատ Քրիստոսեան։

12

Բարձեալ 'ի ձեռս զհայկեան դրօշակ և զխաչ՝
Յորում փայլէր Տէր. միութիւն ազգային,
Եռայ յերակս աւիւն հրատապ հիաքանչ՝
Նոխան ոտից առնել զհրաման Յազկերտին։

13

Սերագրգիռ ճեպեալ 'ի դաշտն Աւարայր՝
Հանդէպ փայլի դիւցազնական քաջութեան,
Թնդան, գոռան զալարափողք Արամեան՝
Հէք ազգայնոցս արեան Թափի վարդափայլ։



14

Թաւալագլոր անկեալ յերկիր դիակունք՝
Գարշին յոդւոց յարեան բոսոր ապաժոյժ.
Մինչ նուաղեալ վիրաւորաց շունչ և ոյժ՝
Անտիրանման այրի կանայք, զաւակունք։

15

Ո՜նդ անկելոց ողբ և կական սրտաշարժ՝
Յուզեն զզգուլթ և զգորով մարդկային.
Ա՜նդ խոցելոց մնչիւնք ձայնից աղէխարշ՝
Զմլին զսիրտս Ջօրականաց 'ի դաշտին։

16

Ա՜յ աղետիցս, աւա՜ղ ցաւոցս անպատում,
Զի՞նչ այս գոռումն, և զի՞նչ գոչիւն հոգեմաշ,
Ահա՛ արհաւիրք, կո՛ծ սիրելեաց Հ աշխարհում՝
Տա՛ն արձագանգս լերանց ձորոց, ախրաշարժ։

17

Առիւծասիրտն Վարդան, Արտակ և Խորէն,
Նահատակեալ ընդդէմ ազգին անօրէն՝
Ի յաղթանակ Հայաստանեայց աշխարհի
Գտին 'ի հաւատս՝ պսակին փառօք պանծալի։

18

Մարմինք հազար երեսնեցունց և վեցից՝
Ցրուեալ ցանեալ յայն դաշտավայր ծաղկալից,
Սուրբ ոսկերացն խնկանուէր յիշատակ՝
Յաչս Անեղին գոյր հաճելի պատարագ։

19

Լոյսին անմեղ և վարդափայլ ճառագայթօք
Դաշտն Աւարայր ո՛չ ծուլանայր ջերմ ալեօք.
Ուր գոլորշիք արեանց սրբոց անմահունչ՝
Համբառնային յերկինս 'ի վեր տխրաշունչ ։

20

Ընդ Սոխակին հնչէր նուագ ողբաձայն,
Ընդ վարդենեօք գոչէր հոգւով սրտամաշ.
Անդ Եղիշէ քաղցրեկ սոխակ սիրաշունչ՝
Լայր Վարդանանց զաղէտս 'ի լուռ 'ի մրմունջ ։

21

Ողջ՝ ցնծա՛ մեր սիրական Հայրենիք,
Հրեշտակք փառաց ձօնեն վշտացդ աւետիք.
Թէ "Առեալ քաջացդ զԷրօշ խաչին Քրիստոսեան՝
Հրճուելին յերկինս յանհուն 'ի փառս Աստուածեան,,։

22

"Բոյդ հոգեզուարթ և լուսեղէն աղաւնեակք,
Սուրբ Ղևոնդեանց քահանայից վեհ Հոգեակք,
Զոհեալ զանձինս 'ի փառս անմահ սուրբ կրօնի՝
Անմահացան բուրմամբ խնկոց հոգելից,,։

23

Փառք երկնաձիր սուրբ կրօնիդ հոգեկան,
Պարծանք վեհից, արի որդւոցդ Հայկազեան,
Եղիցին յաւէտ սուրբ Սիօնիդ Զինուորեալք՝
Վեհ Ազգութեան, և հաւատոյդ գոլ պաշտպանք ։



24

Կեցցեն յԱզգիդ քո բարեպաշտ Հայուհիք,
Կեցցեն այո՛ խանդակաթ մարք երջանիկ.
Քաղցրեկ մանկանցդ Վարդանանց պէս անձկալի՝
Ընդ անոյշ կաթին ջամբիւ զուսումն մայրենի ։

25

Յորոց ընծաեալ Հայոց մանկունք ցանկալիք,
Ձեր մայրութեան սիրափթիթ շառաւիղք,
Համահանգոյն Աւինական Վարդենեաց՝
Ծաղկիլ շնորհօք 'ի փառս Ազգիդ, և Հայրենեաց ։

26

Օրհնեա՛ այժմ՝ Վա՛րդան Արիդ քաջազուն՝
Փառք և պարծանք պանծուխտ որդւոցս Հայկազուն.
Զի քև՛ փրկեալ մեր Սուրբ կրօն և Հայրենիք՝
Արդ՝ քև պարծին մանկունք նորոյս Սիօնի ։

27

Ցնծա՛ 'ի Տէր՝ Բա՛ջ Նահատակդ Վարդան,
Ե՛կ ափափեա՛ց ընդ Մարտիրոսացդ բազմութեան.
Զի 'ի չորեքտասան դարուց հետէ՝ այսանակ
Տօնի յորդւոցդ Ձեր սուրբ անմահ յիշատակ ։

28

Բայց դու նենգժոտ արիւնախանձ պիղծ Վասակ.
Զա՛ր դաւաճան անմեղ ազգիդ սուրբ կրօնի,
Կորեա՛ր հոգւով, նեխեալ մարմնով որդնալից՝
Ի քարշ ածեալ իբրև զգէշ շնասատակ ։

29

Ոսկեփետուր Սոխակդ անմահ Եղիշէ,
Հա՛ր զողբերգակ Հայկեան քնարդ 'ի սրտէ.
Ե՞ր ալեցար, ե՞ր հանգուցար 'ի յերկինս,
Մինչ ունկնդիրք վսեմ ձայնիդ կան յակնկիռս։

30

Քոյդ սխրալի սուրբ յիշատակք անմոռաց
Դրդեն զսիրտս, յուզեն զխորս զգացմանց.
Չի՞ք կենդանի ոսկեղենիկ քոյդ գրիչ՝
Յղեալ զազգիս արդեան վիճակ տխրալից.

31

Ո՜չ մատիք, մանկունք Հայոց յայս նուագ,
Ոչք միաբան սիրով զուգեալ այսանակ.
Ի սէր կրօնից, և հայրենեաց տարանջատ՝
Խոնարհագդէմ զոհել զանձինս մեր նուաստ։

32

Նախնեաց փառաց բարենախանձ Հայկազունք,
Օ՜ն զիմեսցուք 'ի ղաշտ ուսմանց փառաշուք.
Ուր միութիւն և սէր սրտից անձկայրեաց՝
Լուցցեն զջահ շիջելափառ Հայրենեաց.

'ի Նոր - Ջուղա 1880
'ի 28 - 11. Մարտ,
ամի Տեառն. Գէորգ Ե. Մ. Ջօհրապեանց։



Ո՛վ դու Վարդան Հայոց քաջ,
Յաւետ բարձող փրկչին խաչ,
Արհամարհեալ զաշխարհիս,
Կեանս ընտրեցեր քեզ բարիս.
Որ 'ի նախանձ օրինաց,
Ի՞է փրկութիւն Հայրենեաց,
Վառեալ առեր քեզ վահան,
Սուրբ հաւատոյ բարութեանց։
Ո՛վ դու Վարդան ևն
Ո՛հ 'ի խնդիր քոյդ փառաց,
Ի՞ն ոչ համբաւոյ սուտ բարեաց,
Ցանվեհեր սիրտ խիզախեր,
Ջնջեմն առեր Թշնամեաց.
Ո՛վ դու Վարդան ևն
Նալ զերկնաւորդ ուսուցչին,
Բերեր սիրով զտիպ յանձին,
Հեղուլ զարիւն շինութեան,
Եկեղեցւոյ սուրբ ուխտին.
Ո՛վ դու Վարդան ևն
Ընդ այս փառաց՞դ վեհ հանդէս,
Երկինք կոչեաց զ՞քեզ յերկրէս,
Հանգիր առիս քա՛ջդ Վարդան,
Հանգիր 'ի կեանս անվախճան։
Ո՛վ դու Վարդան ևն
Իսկ ես զքոյ Հայաստան,
Տաճարս սուրբ իմոյ անուան,
Մաքրեալ յաղէց բանսարկուին,
Գործեցէք, յարկ բնակութեան։
Ո՛վ դու Վարդան ևն
Ընզոյն սիրոյդ քա՛ջ Վարդան,
Երկնեն սիրտք մեր զարձագանց,
Ջերմախտեաց քոյ յիշատակ,
Ո՛չ մոռասցուք յաւիտեան.
Ո՛վ դու Վարդան ևն

Նկարագրութիւն հանդիսի հիմնարկութեան Նորակառոյց Ազգային Դպրոցի Նոր Ջուղայու որ 'ի յ' 30—11 Ապրիլ 1880 ամի Տեառն:

---

Նորին Ամենապատիւ Բարձր Սրբազնութիւն Տեառն Գրիգորիս Արքեպիսկոպոսի, Բարեխնամ և Առաքելաշաւիղ Առաջնորդի Սրբոյ Ամենափրկչեան Վանաց 'ի 26 — 7 Ապրիլ 1880 թուով տպագրեալ հրաւիրանաթղթաւ իւրով յայտ արար Պատուելի Հասարակութեան Ջուղայուս՝ օրինակ զայս.

---

« Բարեշնորհ Քահանայից և Պատուելի հասարակութեան Հոգևոր Զաւակաց մերոց ծանուցանի:

« Ցնծալից և Հայրական զգածեալ սրտիւ աւետեմ, զի աջով օգնականութեամբն Աստուծոյ փորուածք հիման նորոգ կառուցանելի Ազգային Դպրոցին՝ որ 'ի Չարսու թաղի Նոր Ջուղայու, պատրաստ են: Արդ քանզի սոյն Աստուածահաճոյ և Ազգօգուտ գործն միաբան և. համահաճ հաւանութեամբ Հոգևոր Զաւակացս յառաջացաւ. և իմաստութիւնն Հօր՝ Յիսուս Քրիստոս ինքն առաջնորդեաց ամենեցուն միաշունչ և միակամ խորհրդով պատրաստել տուն և տեղի իմաստութեան Ազգային մանկտւոյն. վասն որոյ հասարակաց է և բաղդաւորութիւնն վայելելոյ զարդիւնս յառաջադիմութեան: Արդ 'ի յառաջիկայ Դատաւորի Կիւրակէին որ է 30-11 Ապրիլ, հրաւիրեմք զպատուելի հասարակութիւն գալ ժողովիլ արք և կանայք ծերք և տղայք յառաւօտեան ժամերգութեան 'ի սուրբ վանս Ամենափրկչեան որ զկնի աւարտման սուրբ Պատարագի բազմութեամբ գնամք 'ի պատրաստեալ տեղին ուր հանդիսաւորութեամբ օրհնելով ըզփորածն հիմանց՝ զառաջին քարն զետեղելոց եմ Աստուծով խմելօ իսկ ձեռամբս որ-



պէս զՀայր Հասարակացդ և սկսանի անմիջապէս հիմնարկութիւնն: Մնայոյս գոլով թէ ամենայն ոք ցնծութեամբ ընկալեալ զհրաւէրս մասնակցի այս հասարակաց ցնծութեան՝

Ծառայ ուխտելի աղօթից աղօթարար

26 —7 . Ապրիլ 1880
'ի Նոր Ջուղա:

ԳՐԻԳՈՐԻՍ
Արքեպս. Հայոց Պարս" և Հնդ" ,, :

---

Ըստ այսմ համայն ժողովրդականք Ջուղայու ցնծալից զգացմամբ ընկալեալ զայն ցանկալի հրաւիրագիր 'ի հոգևոր Հօրէն իւրեանց 'ի Դատաւորի Կիւրակէի, համախմբեալ ժողովեցան 'ի սուրբ Եկեղեցի Վանացն. ուրանօր զկնի արձակման սրբոյ Պատարագին՝ Նորին Բարձր Սրբազնութիւն Հոգևոր հովիւ մեր ել 'ի բեմ սրբոյ սեղանոյն, և բնաբան եդեալ վսեմական քարոզի իւրում զբան իմաստնոյն Սողոմոնի, թէ « Եւ տունս զոր ես շինեմ մեծ է ,, (Բ. Մնաց. Բ. 5:) բացորոշապէս եցոյց զցանկալի նպատակ հանդիսի այնր աւուր, թէ « Արդ ըստ Սողոմոնեան տաճարին մեծ և փառաւորէ վասն ազգայնոցս և հիմնարկութիւն մերոյս նորոգ Դպրատանսմին երբ հայրական բերկրագուարթ դիմօք աւետիս կարդայր բանաւոր հօտի իւրում ասելով թէ « Ահա՝ նախ անճառելի սուրբ կամօք Աստուծոյ՝ և ապա համակամ և սիրահաճ միաբանութեամբ ներկայ և տարաբնակ հոգևոր որդւոցս պսակեցան այն բազմամեայ Աստուածահաճոյ բաղձանք և ազգօգուտ նպատակք նախնի հարց և նախորդաց մերոց՝ որոց ցանկացեալ տեսանել զայսպիսի օր զոր ինչ մեք տեսանեմք և հոգւով ցնծամք, չեղեն արժանի. սակայն որպէս 'ի հնումն կառուցումն սրբոյ Տաճարին Տեառն Սողոմոնի վիճակեցաւ և ոչ Հօրն Նորին Դաւթի՝ ով անհասանելի սուրբ կամաց Կենարարին Թերևս վերնախնամ տնօրէնութիւն Նորին պատշաճ դատեցաւ ըզբարեպաշտական ձեռնարկութիւն և զլեայոյս նպատակ իսկ Նոցին ընդ միջոցաւ մեր 'ի կատար հասուցանել 'ի փառս սուրբ անուան իւրոյ. որոյ վասն հայրական լիազեղուն զգացմամբ ու-

րախացեալ զաջողութենէ գործոյն, և այն ինչ նշմարեալ 'ի դէմս իւրաքանչիւրոց ամենեցուն, զզուարթագին խնդութիւն պատանեկաց, զաշխուժալի ցնծութիւն երիտասարդաց և զխորին ուրախութիւն հարց և մարց որ 'ի յաւելուածոյ սրտից առատագեղեալ արծարծէր 'ի դէմս ամենեցուն նոր զգացումն՝ և նորոգ Ազգային եռանդ՝ գովաբանէր զհոգևոր զաւակունս իւր թէ «Եթէ սկսուած գործոյս այսչափ ուրախութիւնս ազդէ սրտից ձերոց՝ ապա որչափ ևս առաւել 'ի վայելել ձեր զարդիւնս այնր, այո՛ որպէս 'ի յերեկեան աւուր տեսանելով ձեր զցանկալի յառաջադիմութիւն դստերաց ձերոց 'ի հարցաքննութեան հանդիսի սուրբ Կատարինէ Օրիորդաց Վարժ-րոցին ուրախացայք 'ի սրտէ՝ յաւուր միում ևս ուրախացեալ հոգւով բերկրեսջիք 'ի վերայ յառաջադիմութեան որդեկաց ձերոց ընդ ազգային յարկաւս: Որպէս ըստ Աստուածային հրամանի նիւթական բազմառատ նուէր Ազգին Իսրայէլացւոց 'ի շինութիւն սրբոյ խորանին վկայութեան (Ելից. ԼԶ. 4) այնքան առատացաւ՝ մինչ հոգաբարձուք շինուածոյն թախանձանօք խնդրեցին 'ի Մովսիսէ դադարեցուցանել. այսպէս և մեզ սիրելի է՝ 'ի միակամ համաձայնութենէ Ձերմէ գուշակել, թէ չպակասի Աստուծով և մեզ մինչև ցվերջ շինուածոյն օգնականութիւն սիրելի Հօտիս. քանզի արդէն յատկացուցաք զգումարն հանգանակութեան Ջուղայու, որոց կցորդին և այլք հետ զհետէ. այլ և Բաթաւիոյ մերազնեայք ազգասիրաբար յուսադրեալ են վասն ապագային, սակայն այս Աստուածահաճոյ ձեռնարկութիւն տակաւին կարօտի միաբանական և սիրայօժար ձեռնտուութեան համազգեացդ Ջուղայու 'ի կատարելագործութիւն. վասն որոյ ամենայն անհատ եթէ հաճեսցի մասնակցիլ այսմ՝ ունի պարտս 'ի կատարել՝ և իրաւունս 'ի վայելել. են՝ որոց հանճար և մտաւոր կարողութիւն, են՝ որոց եռանդ ազգասիրական և դրամական նպաստ պիտոյ եղեալ՝ են ևս որք այլ և այլ միջոցօք ձեռնտու և օգնական պարտին հանդիսանալ 'ի կառուցումն սոյն Ազգային տանս: Աստի 'ի վերջոյ յորդորական աղերս բանիւք յորդորէր զամենեսին ըստ յօժարական ըղձից և բարեհաճ կամաց նուիրել



զոր ինչ մարթ իցէ ըստ կարեաց անձին, և վասն չքաւորաց և այրեաց՝ թէ պէտ յայտնէր դժուարութիւնս, սակայն որ ինչ բղխեսցէ ասէր 'ի սրտից ձերոց սակս որբացեալ զաւակաց ձերոց՝ երբև զերկուս լումայս այրւոյն՝ ըստ փրկչական բանին Քրիստոսի չմտ համարեսցի յաչս Աստուծոյ, և ընդունելի 'ի գանձանակ ազգօգուտ գործոյս: Աստի 'ի վերջոյ մաղթանս ուղղեաց առ Աստուած, նախ՝ վասն բաղձալի գործոյն, և ապա սակս բարեպաշտ ժողովրդոց, խնդրելով յԱստուծոյ պահպանել զամենեսին 'ի խաղաղութեան, 'ի փառս սուրբ անուան իւրոյ՝ և 'ի շինութիւն ազգի և սուրբ Եկեղեցւոյ.

Զկնի աւարտման հոգելից քարոզին՝ համայն դասք Վեհանայից շուրջառազգեստեալ ելին արտաքս յԵկեղեցւոյն ընդ կուսանաց և Դպրաց, և զհետ նոցին Նորին Բարձր Սրբազնութին Եկեղեցական զգեստուք. և յառաջ ընթանային առ դուրս նուագելով զշարականն «Այսօր երկնայինք ուրախացան ընդ երկրաւորացն նորոգման» եւ, և զկնի այնոցիկ խուռներամ բազմութիւն ժողովրդականաց, արանց և կանանց, երիտասարդաց և մանկանց, դասադաս կարգաւորութեամբ շարունակեալ զընթացս իւրեանց՝ միահամուռ եկեալ խմբեցան 'ի վայր նորոգ հիմնարկելի Դպրոցին. ուր յառաջ մատուցեալ հոգևորական դասուց 'ի միջավայր նորափոր հիմանն, և ուղղելով զդէմս իւրեանց 'ի Հարաւ՝ կացին կիսաշրջանակ կարգաւորութեամբ: Անդրէն կատարելով զկոհաբանական աղօթս, ընթերցեալ եղև սուրբ Աւետարանն հանգերձ Թաքօրիւ որ և յայնմ ժամու նոյն Հոգևոր Հայր և բարեխնամ տէր ամենեցունցս կալեալ յաջ ձեռին իւրում ըզպղնձաքանդակ յիշատակագիր հիմանն ծրարեալ և պրկեալ յանագեայ թիթղան յորում քանդակեալ էր այս օրինակ. «Հիմնարկութիւն Ազգային դպրոցիս՝ եղև 'ի Հայրապետութեան Տեառն Տեառն Գէորգայ Դ. Սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց. ձեռամբ Գրիգորիս Արքեպիսկոպոսի, Առաջնորդի Ամենափրկչեան Վանաց Նորոյս Ջուղայու յ'30 Մարտ 1880»: մաղթանս ուղղեաց առ Աստուած սակս աջողակէտ հիմնարկութեան և կառուցման Ազ-

գայրն Դպրոցին․ ուստի և քար մի առեալ ընդ նմին՝ էջ անդէնուղ 'ի վայր 'ի փորուած անդր․ և ուղղելով զդէմս իւր առ համայն բազմութիւնն՝ բարբառեաց զփրկչական բան Յիսուսի, թէ “ Խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ ,, ։ ( Մատթ․ Է․ Դ ) ։ Գոհացաւ զՏեառնէ, և զառաջին քարն իւրով իսկ ձեռամբ օրհնեալ և ընդ յիշատակագրին զետեղեալ 'ի յատակի հիման՝ բարեմաղթութիս արար գոչելով “ Ամէն ,, ընդ որում և համայն բազմութիւնն միասիրտ ցնծութեամբ և միաբան կրկնեցին “ զԱմէնն ,, ։ Զերկրորդ քարն ևս առեալ և տուեալ 'ի ձեռս Արժանապատիւ Խաչակիր Խաչատուր Վարդապետին՝ ձայնակցութեամբ բազմութեանն կրկնելով “ զԱմէնն ,, զետեղեաց նա զայն ևս ։ Ապա համայն հոգևորականաց և աշխարհականաց ոմանց իջեալ հետ զհետէ 'ի փորուածն հիման՝ ամենայն ոք փութայր յառաջել մասնակցել աշխատութեանն ։ Ի նմին ժամու ևս առաւել բարձրացաւ ձայն ցնծութեան ժողովրդականաց․ և բազմիցս կրկնեալ լինելով 'ի նոցանէ “ Ամէնն՝ ,, ամենայն ոք սիրակամ և յօժար բաղձանօք առնոյր ինքնին կաւ և քար և փափագէր աշխատակից լինել ցանկալի հիմնարկութեանն այնմիկ ։ Զկնի այնր ելեալ անտի հոգևորականաց և 'ի բաց առեալ զեկեղեցական զգեստս իւրեանց՝ ելին ընդ Նորին Բարձր Սրբազնութեն 'ի սրահ հին շինուածոյն, ուր գործս արկեալ աթոռք և նստարանք պատրաստ կային, և բազմեցան անդ ամենեքեան ։ Իսկ քանզի 'ի նմին աւուր Միստր Յօլէդէր Գերմանացի պաշտօնատարն հեռագրատան Անգղիացւոց որ յԱսպահան՝ ( հմուտ գոլով պատկերահանութեան արհեստի ) ըստ կանխազեկոյց փափագանաց իւրոց ստացեալ էր զսիրայօժար հաճութիւն Ամենապատիւ Բարձր Սրբազան Հօր՝ յառաջագոյն պատրաստեալ էր ըզգործիս իւր 'ի վերայ տանեաց հարաւակողման հին շինուածոյն, որ և 'ի ճշգրիտ հիմնարկութեան ժամու էառ զլուսանկար պատկեր այնր փառաւոր հանդիսի ։ Ի նմին աւուր Հայր Յարութիւն Վարդապետն Հայ կաթոլիկաց, և Միստր Բրուս Անգղիացի Բողոքեան ընդ այլ Եւրոպացի պաշտօնատարաց



ոմանց յորս էր և Գերապատիւ Պարոն Ստեփաննոս Պ․ Աղանուրեան գործակատարն Բրիտանական Տէրութե որ յԱսպահան՝ պատուելով զհրաւէր Սրբազան Հօր՝ ներկայացան համակրական սիրով և նոքին, ուրախակից լինել նոյն հանդիսին ։ Աւստի զգածեալ ամենեցուն մարդասիրական զգացմամբ՝ հանգանակութիւն դրամոց ևս եղև անդանօր սակս նորակառոյց Դպրոցին ։

Յայնմ հանդիսի ըստ բարեհաճ թոյլատրութեան Բարձր Սրբազան Հոգևոր Հօր մերոյ՝ Սրբակրօն Տէր Կիւրեղ Ծ․ Տէր Յովհաննեան․ Քահանայն սուրբ Յովհաննու Եկեղեցւոյն յոտին կացեալ՝ արար ատենաբանութիւն առաջի հանդիսացեալ բազմականաց․ և թարգման հանդիսանալով սրտաբուղխ զգացման համազգեաց Ջուղայոց՝ արտայայտեաց զցնծապատար ուրախութիւն սրտից ամենեցունց, որոց 'ի վաղընջուց ժամանակաց հետէ սրտատրոփ բաղձանօք և անհամբեր յուսով ակնկալեալ մնային 'ի տեսանել զայնպիսի փառաւոր Ազգային հիմնարկութիւն Դպրոցի յօգուտ սիրասուն զաւակաց և 'ի մխիթարութիւն իւրեանց․ որպէս զի՝ մի լիցի աւէր ուսման աղագաւ զրկել զնոսին 'ի ծնողական գորովալի գրկաց իւրեանց, և առաքելով 'ի հեռաւոր վայրս պանդուխտ աշխարհաց՝ սիրակարօտ հոգւով կալ մնալ վասն նոցին անանդորր և մտատանջ ։ Աւստի փառս տալով սուրբ կամաց Կենարարին՝ զանբաւ գոհունակութիւնս յայտնէր զնորին մարդասիրութենէն զի անհուն ողորմութեամբ իւրով գթացեալ 'ի մերազնեայս ըստ կենարար բանի վարդապետութեան ծոցածին որդւոյ իւրոյ թէ “ Որ խնդրէ՝ առնու և որ հայցէ՝ գըտանէ ,, ահա առ գահակալութեամբ Նորին Ամենապատիւ Տէր Գրիգորիս Արքեպիսկոպոսի բարեխնամ Առաջնորդին մերոյ՝ պսակեաց զբազմամեայ բաղձանս սրտից և զազգօգուտ նպատակ հայազգի հասարակութեան Նորոյս Ջուղայու ։ Իսկ քանզի ինքն ևս հոգևոր մատակարար գոլով սուրբ Յովհաննու Եկեղեցւոյ Զարաու թաղին՝ յայտնեաց շնորհակալութիւն 'ի դիմաց համայն թաղեցւոցն իւրոց յաղագս հաճելոյ Համազգեաց Ջուղայու ընդունել զայգեն զկառ-

կացեալ տեղին շինուածոյն որ սեպհական կալուած էր յի-շեալ Եկեղեցւոյ. յաւել առել թէ արժէր յիրաւի աւուրս համբէս և նպաստակ շնորհ կալնուլ զդրացի Եղբարց մերոց որ հաճեցան ընդունել զայգին.

Աւասիկ առ 'ի շարժելոյ զգութ և 'ի բարի նախանձ արկանելոյ զամենեսին՝ յաւել և զայս 'ի լսելիս ունկնդրաց. թէ "Զի որպէս իւրաքանչիւր Եկեղեցիք միւս Թաղից Պոլսոյ 'ի սէր հոգեսնունդ զաւակաց իւրեանց նիւթապէս ձեռնտու հանդիսանան այսմիկ. աղէ և սուրբն Յովհաննէս Մկրտիչ եբրև յառաջնթաց քան զնոսին շուրջ զարձուցեալ զաչս իւր 'ի շրջակայ համազգիս Պոլսոյ և կարկառեալ զձեռս ոչ միայն ընդ գրկէ զջերմեռանդ հաւատացեալ որդիս Եկեղեցւոյ իւրոյ, այլ և զնոցին սիրավիթխթ մանկունս յայսմ սիրահրաւէր տան, յիւր իսկ ծոց գրգուեալ և մակաղեալ ըստ մարգարէին Դաւթի 'ի վայրի դալարւոյ բնակեցուցանել և առ ջուրս հանգստեան սնուցանել և դարմանել խոստանայ ընդ հովանեաւ պատսպարեալ շնորհաց իւրոց: Արդ որ 'ի վերջոյ մաղթեաց յԱստուծոյ սակս աջողուէտ լրութեան և կառուց-ման յիշեալ դպրոցին 'ի յառաջադիմութիւն Հայ մանկտւոյն 'ի տեսական և 'ի քարոյական ուսմունս որպէս զի նովիմբք մուտ գործեալ 'ի մեզ Ազգային և քարոյական լուսաւորու-թիւն, Զինուորեալ մանկունք կաթուղիկէ և Առաքելական սուրբ Եկեղեցւոյս յուսով հանդերձեալ, կենաց առաքինա-զարդ վարուք զարդարեալ հանդոյն սուրբ նահատակաց և Մարտիրոսաց Հայաստանի՝ քաջայաղթ փառօք ցնծասցեն 'ի դասս յաղթական Եկեղեցւոյ, 'ի փառս Աստուծոյ՝ և 'ի պար-ծանս Ազգի և Հայրենեաց.

Յետ այսորիկ Նորին Բարձր Սրբազնութիւնն հայրական խրախուսանօք գովաբանելով զջերմեռանդագին ըն-դացումն յիշեալ Քահանային՝ և բարեմաղթութիւնս ուղ-ղելով առ Աստուած սակս յարատև աջողութեան ազգային նորակառոյց Դպրոցին՝ յառաջ կոչեաց զերկոտասանսին Նոր-ընտիր Պատուարժան Հոգաբարձուս յիշեալ շինուածոյն, և օրհնելով զամենեսին շնորհօք Տեառն բարեպէս կատարել



զպաշտօնս նուրեանց՝ առաց "զՊաշտպանիչն": Ի վերջ աւե-նայնի՝ վայելելով ամենեցուն զբազմատեսակ քաղցրաւենիս՝ արձակեցան անպատում ցնծութեամբ տանելով ընդ ինքեանս զայս զգացումն թէ որչափ քաղցր է միութեամբ գոր-ծելն որպէս և ձեռնարկութեամբ Ազգային դպրոց կառու-ցանելոյ տեսին զի մինչև ցարդ եղեալ դպրոցքն էր՝ որ յա-ռաջ մասնաւոր բարերարաց արդեամբք կառուցեալ էին և էր՝ որ 'ի մէջ շինուածոց սրահից Եկեղեցեաց խմբեալ էին՝ մանկունք Ազգիս. իսկ սա առաջին գաղափարն է զի այս-պիսի, Ազգային յարկ մի կառուցանեն յորում ամփոփեսցին համայն Գիւղորեացն մանկունք 'ի պարծանս ազգիս և 'ի գործ-նական նշան միաբանութեան:

Գրեալ 'ի 5 — 17 Ապրիլ 1880 'ի Նոր — Գիւղ: Գէորգ Կ. Մ. Օհրապեանց:

[illegible]

[illegible]

